

## ԹԵՄԱ 9

Դասընթացի անվանումը՝	«Վնասների հատուցումը՝ իրական վնաս և բաց թողնված օգուտը, որպես քաղաքացիական իրավունքի պաշտպանության եղանակ»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012 թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

*Դասընթացը նախատեսված է առաջին ատյանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:*

Դասընթացն անդրադառնում է վնասի հատուցման ինստիտուտի հիմնախնդիրների ներկայացմանն ու քննարկմանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Իրական վնասի և բաց թողնված օգուտի տարանջատումը:
- Ինչպիսի հանգամանքներ պետք է հաշվի առնի դատարանը բաց թողնված օգուտի առկայությունը պարզելու համար:
- Բաց թողնված օգուտի հատուցման համար անհրաժեշտ պայմանները:

*Դասընթացը վարում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Մամիկոն Դրմեյանը:*